Հավելված

Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարի

2018թ. Դեկտեմբեր «17»-ի

N 1553 հրամանի

# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ԿԱՐԳ

## I. Կադրերի տրամադրության տակ թողնելը

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) կարգավորվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում պայմանագրային զինծառայողներին կադրերի տրամադրության տակ թողնելու հետ կապված հարաբերությունները:

2. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պայմանագրային զինծառայողներին զբաղեցրած պաշտոններից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու համար հիմք են՝

1) զինծառայողի զբաղեցրած հաստիքը կրճատվելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանն ու այլ պաշտոնի նշանակելու առաջարկ ներկայացնելու անհնարինության դեպքում զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից ներկայացված գրությունը՝ կադրերի տրամադրության տակ թողնելու առաջարկով,

2) համապատասխան ատեստավորման հանձնաժողովի կողմից զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու եզրակացությունն ու այլ պաշտոնի նշանակելու առաջարկ ներկայացնելու անհնարինության դեպքում զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից ներկայացված գրությունը՝ կադրերի տրամադրության տակ թողնելու առաջարկով,

3) զինծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու և կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու կամ հարուցված քրեական հետապնդման շրջանակներում նրա պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ որոշումը,

4) կալանքի ձևով պատժի դատապարտելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը,

5) որոշակի պաշտոններ զբաղեցնելու արգելքի ձևով պատժի դատապարտելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը՝ դրանով արգելված պաշտոններ զբաղեցնելու դեպքերում,

6) զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու մասին ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումն ու հիվանդանոցային բուժման մեջ գտնվելու մասին բժշկական հաստատության տեղեկանքը,

7) ծառայությունը շարունակելու համար ՀՀ պաշտպանության նախարարության համակարգ տեղափոխելու վերաբերյալ այլ պետական մարմնի ղեկավարի համապատասխան հրամանը,

8) մեկ ամսից ավելի ժամկետով անհարգելի պատճառով ծառայության չներկայանալու վերաբերյալ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) և իրավապահ մարմնի կողմից տրված տեղեկատվությունը,

9) գերության մեջ գտնվելու վերաբերյալ զորամասի (զինվորական կառավարման մարմնի) և իրավապահ մարմնի կողմից տրված տեղեկատվությունը,

10) վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա որպես ունկնդիր ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում որպես ունկնդիր վերապատրաստման (այսուհետև՝ Ուսումնառություն) գործուղվելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան անվանական հրամանը:

3. Համապատասխան հիմքերի առկայության դեպքում պայմանագրային զինծառայողներին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կադրերի տրամադրության տակ թողնելու գործընթացը կազմակերպվում է հետևյալ կարգով.

1) Կարգի 2-րդ կետի.

ա. 1-ին ենթակետով նախատեսված և տվյալ զորամասում համապատասխան թափուր պաշտոնների բացակայության կամ նշանակվելու առաջարկին զինծառայողի

գրավոր անհամաձայնության դեպքերում հաստիքի կրճատման վերաբերյալ հրամանն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում զորամասի համալրման (կադրերի) բաժանմուն-



քում սահմանված կարգով նախապատրաստվում է զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու վերաբերյալ առաջարկ, որը հիմքերի հետ ըստ վերադասության ուղարկվում է զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասություն ունեցող պետին,

բ. 2-րդ ենթակետով նախատեսված և տվյալ զորամասում համապատասխան թափուր ցածր պաշտոնի բացակայության դեպքում ատեստավորման հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում զորամասի համալրման (կադրերի) բաժանմունքում սահմանված կարգով նախապատրաստվում է զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու վերաբերյալ առաջարկ, որը հիմքերի հետ ըստ վերադասության ուղարկվում է զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասություն ունեցող պետին,

գ. 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում տվյալ կետում նշված հիմքերն ստանալուց հետո եռօրյա ժամկետում զորամասը դրանք ընդհանրացնում և ուղարկում է զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասություն ունեցող պետին ենթակա կադրային մարմին՝ միաժամանակ այդ մասին տեղեկացնելով ըստ վերադասության,

դ. 5-րդ ենթակետով նախատեսված և տվյալ զորամասում համապատասխան թափուր պաշտոնների բացակայության կամ նշանակվելու առաջարկին զինծառայողի գրավոր անհամաձայնության դեպքերում, որոշակի պաշտոններ զբաղեցնելու արգելքի ձևով պատժի դատապարտելու վերաբերյալ՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում զորամասի համալրման (կադրերի) բաժանմունքում սահմանված կարգով նախապատրաստվում է զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելու մասին առաջարկ, որը ըստ վերադասության հիմքերի հետ ուղարկվում է զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասություն ունեցող պետին,

ե. 7-րդ ենթակետով նախատեսված դեպքերում տեղափոխության վերաբերյալ հրամանը, զինծառայողի անձնական գործերը, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ նախատեսված տեղափոխության վերաբերյալ հիմքերը ստանալուց հետո ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչությունում հնգօրյա ժամկետում ուսումնասիրվում են դրանք,

գ. 10-րդ ենթակետով նախատեսված դեպքերում Ուսումնառության գործուղելու վերաբերյալ անվանական հրամանը զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի



տրամադրության տակ թողնելու վերաբերյալ հրամանի նախագծի նախապատրաստման հիմք է,

2) նույն զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից հրամանագրման իրավասությունից դուրս՝ զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու վերաբերյալ նյութերն ըստ վերադասության ուղարկվում են այդ իրավասությունն ունեցող պետի հրամանագրմանը,

3) Կարգի 2-րդ կետում և 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերի հիման վրա զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասություն ունեցող պետին ենթակա կադրային մարմնում յոթնօրյա ժամկետում ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը, ստուգվում օրենքի պահանջներին համապատասխանությունը, այնուհետև նախապատրաստվում զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու վերաբերյալ հրամանի նախագիծ (ձև 1-12) և հիմքերի հետ ներկայացվում պետին,

4) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների խախտում կամ թերություն (որը հնարավոր չէ տեղում վերացնել) հայտնաբերվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու առաջարկին ընթացք չի տրվում և այդ մասին գրավոր տեղեկացվում է առաջարկն ուղարկող զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին),

5) զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու առաջարկ ներկայացնելուց հետո զինծառայողի անհատական տվյալների, պաշտոնի, հաստիքի փոփոխման դեպքերում ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար,

6) զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու առաջարկ ներկայացնելուց հետո զինծառայությունից արձակելու կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու այլ հիմքեր առաջանալու դեպքերում ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ըստ վերադասության, ինչպես նաև կադրերի տրամադրության տակ թողնելու

իրավասություն ունեցող պաշտոնատար անձին և այդ հիմքերով գործընթացը կասեցվում է,



7) ստորագրված հրամանները համարակալվում են ստորագրման օրվանից հետո` եռօրյա ժամկետում: Հրամանն առաքվում է բոլոր շահագրգիռ ստորաբաժանումներ, այդ թվում` զինծառայողի զբաղեցրած պաշտոնի ՌՀՄ-ին համապատասխան վարչության կամ ծառայության կամ առանձին բաժնի պետին (բացակայության դեպքում` իրավասու պաշտոնատար անձին),

8) կադրերի տրամադրության տակ գտնվելու օրենքով սահմանված ժամկետի սկիզբ է համարվում զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը:

4. Կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների ընդհանուր հաշվառումը իրականացվում է ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչությունում, իսկ հետագա ծառայության հիմնական պատասխանատուն զինծառայողի վերջին զբաղեցրած պաշտոնից ազատող պաշտոնատար անձին ենթակա կադրային մարմինն է:

## II. Կադրերի տրամադրության տակ թողնելու իրավասությունները

5. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում կադրերի տրամադրության տակ թողնում են.

1) ՀՀ պաշտպանության նախարարը`

ա. ՀՀ ՊՆ բարձրագույն սպայական կազմի պաշտոններից ազատված անձանց,

բ. «գնդապետ» հաստիքային դասակարգումով, ինչպես նաև առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների «փոխգնդապետ» հաստիքային դասակարգումով հրամանատարների պաշտոններից ազատված անձանց,

գ. ՀՀ պաշտպանության նախարարի անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների զինվորական պաշտոններից ազատված անձանց,

դ. անհրաժեշտության դեպքում` սույն կետում նշված բոլոր զինծառայողներին,

2) ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը`

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված`

ա. «գնդապետ» դասակարգումով 32 և 33 խմբերի ոչ հրամանատարական կազմի պաշտոններից ազատված անձանց,

բ. մինչև «փոխգնդապետ» ներառյալ հաստիքային դասակարգումով, այդ թվում՝ գնդի (բրիգադի) և հավասարազոր կառուցվածքային ստորաբաժանումների հրամանա-



տարների տեղակալների, նրանց հավասարեցված, ինչպես նաև այլ սպայական, ենթասպայական և շարքային պայմանագրային պաշտոններից ազատված անձանց,

բ. առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների՝ մինչև «մայոր» ներառյալ հաստիքային դասակարգումով հրամանատարների պաշտոններից ազատված անձանց,

գ. անհրաժեշտության դեպքում սույն կետում նշված բոլոր զինծառայողներին՝ բացառությամբ պաշտպանության նախարարի իրավասությանը վերապահված անձանց,

3) բանակի հրամանատարը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «փոխգնդապետ» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոններից ազատված անձանց:

Ձև 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հաստիքների կրճատման պատճառով)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Արամ Արմենի Դավթյանին ս.թ. հունիսի 17-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

# Հ Ր Ա Մ Ա Ն

N        -Ա

«____» _________20    թ.                                                    ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու դեպքում)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ   Ե Մ

փոխգնդապետ Արմեն Գաբրիելի Տիգրանյանին **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (զինծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելիս և կալանքը որպես խափանման միջոց ընտրվելիս)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Արմեն Գաբրիելի Տիգրանյանին ս.թ. հունվարի 21-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Ձև 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (զինծառայողի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման շրջանակներում պաշտոնավարման ժամանակավոր դադարեցման որոշում կայացնելիս)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

փոխգնդապետ Արմեն Գաբրիելի Տիգրանյանին ս.թ. հունվարի 21-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

### ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կալանքի դատապարտվելու դեպքում)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

փոխգնդապետ Արմեն Գաբրիելի Տիգրանյանին ս.թ. ապրիլի 15-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի հրամանատարի տեղակալի (30) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N        -Ա

« ____ » _________20    թ.                                                                 ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով որոշակի պաշտոններ զբաղեցնելու արգելքի ձևով պատժի դատապարտվելու դեպքում)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

փոխգնդապետ Արտավազդ Գագիկի Մեսրոպյանին ս.թ. ապրիլի 15-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ֆինանսական ծառայության պետի (30) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրա-մադրության տակ:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Զ Ի Ն Վ Ա Ծ   Ո Ւ Ժ Ե Ր Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Շ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

# Հ Ր Ա Մ Ա Ն

N          -Ա

« ____ » _________20     թ.                                                  ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի  և 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (հիվանդանոցային բուժման մեջ գտնվողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս)՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ

մայոր Ֆելիքս Եղմոնդի Գրիգորյանին **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի ավտոմոբիլային ծառայության պետի (23) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ԶՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

## ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 44-րդ հոդվածի (այլ պետական լիազոր մարմնից ՀՀ պաշտպանության նախարարության համակարգ տեղափոխվելիս)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ՀՀ ոստիկանության համակարգից ՀՀ պաշտպանության նախարարության համակարգ հետագա ծառայությունը շարունակելու տեղափոխված մայոր Արմեն Մաքսիմի Տիգրանյանին ս.թ. հոկտեմբերի 12-ից **թողնել** ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ձև 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (մեկ ամսից ավելի ժամկետով անհարգելի պատճառով ծառայության չներկայանալու դեպքում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

կապիտան Սիմոն Տարիելի Կարագյոզյանին ս.թ. հոկտեմբերի 12-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի վաշտի հրամանատարի (19) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ձև 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի (գերության մեջ գտնվելու դեպքում)՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

ավագ լեյտենանտ Հրաչյա Տիգրանի Պողոսյանին ս.թ. հոկտեմբերի 12-ից **ազատել** ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի վաշտի հրամանատարի (19) պաշտոնից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի (ռազմաուսումնական հաստատություն ընդունվելու դեպքում), ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 20 թ. « »-ի N հրամանը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ներքոհիշյալ զինծառայողներին **ազատել** զբաղեցրած պաշտոններից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ.

1) ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի գումարտակի հրամանատար (27), փոխգնդապետ Հրաչյա Վիլիսոնի Պետրոսյանին,

2) ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի դիվիզիոնի հրամանատար (27), փոխգնդապետ Վիլեն Համլետի Կարապետյանին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ն Ա Խ Ա Ր Ա Ր

## Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« ____ » _________20 թ. ք. Երևան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի (ռազմաուսումնական հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում), ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարի 20 թ. « »-ի N հրամանը՝

## Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ

1. Ներքոհիշյալ զինծառայողներին **ազատել** զբաղեցրած պաշտոններից՝ թողնելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ.

1) ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի գումարտակի հրամանատարի տեղակալ (23), մայոր Հրաչ Գուրգենի Լիպարիտյանին,

2) ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի գումարտակի շտաբի պետ (23), կապիտան Վիկտոր Արմենի Հայրապետյանին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ